

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրություն)

2022

ԳԼՈՒԽ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնադրությունը մշակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:

1.2. Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի հիմնադրման հիմնական նպատակը ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեությանն օժանդակելը և ֆինանսական բնագավառի վերաբերյալ սպառողներին իրազեկելն է:

1.3. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն Կանոնադրության հիման վրա:

1.4. Հիմնադրամի անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» հիմնադրամ,

Հայերեն կրճատ՝ «ՖՀՀԳ» հիմնադրամ,

Ռուսերեն լրիվ՝ «ОФИС ПРИМИРИТЕЛЯ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ» фонд,

Ռուսերեն կրճատ՝ «ОПФС» фонд,

Անգլերեն լրիվ՝ “OFFICE OF THE FINANCIAL SYSTEM’S MEDIATOR” foundation:

Անգլերեն կրճատ՝ “OFSM” foundation:

1.5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0010, Մ. Խորենացի 15, «Էլիտ պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ: Հիմնադրամի գտնվելու վայրը կարող է փոփոխվել, որի մասին սույն կանոնադրության մեջ կկատարվեն համապատասխան փոփոխություններ:

1.6. Հիմնադրամն ունի կլոր կնիք, որը պարունակում է Հիմնադրամի անվանումը հայերենով: Կլոր կնիքը կարող է պարունակել նաև Հիմնադրամի անվանումը անգլերենով և/կամ ռուսերենով, ինչպես նաև խորհրդանիշի պատկերը:

1.7. Հիմնադրամը կարող է ունենալ խորհրդանիշ:

1.8. Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:

1.9. Հիմնադրամը ստեղծված է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պահից և գործում է անժամկետ:

ԳԼՈՒԽ 2. Հիմնադրամի հիմնադիրը

2.1. Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է (այսուհետ՝ Կենտրոնական բանկ): Կենտրոնական բանկի գտնվելու վայրն է՝ ք.Երևան 0010, Վ.Սարգսյան 6:

ԳԼՈՒԽ 3. Հիմնադրամի նպատակը և գործառույթները

3.1. Հիմնադրամի գործունեության նպատակը ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեությանն օժանդակելը և ֆինանսական բնագավառի վերաբերյալ սպառողներին իրազեկելն է:

3.2. Իր առջև դրված նպատակն իրագործելու համար Հիմնադրամը՝

3.2.1. Օրենքով, սույն կանոնադրությամբ և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի սահմանված կարգով կառավարում է Հիմնադրամի միջոցները,

3.2.2. աջակցում է Օրենքով հաճախորդ հանդիսացող անձանց պահանջի ընդունման և քննության գործընթացին,

3.2.3. հավաքագրում է Օրենքով սահմանված մասնակցության վճարները,

3.2.4. իրականացնում է Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

3.3. Հիմնադրամը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն:

ԳԼՈՒԽ 4. Հիմնադրամի սկզբնական գույքի արժեքը, դրա ձևավորման աղբյուրները. Հիմնադրամի գույքի տնօրինման և կառավարման կարգը

4.1. Հիմնադրամի սկզբնական գույքը ձևավորվում է Կենտրոնական բանկի կողմից՝ սույն կանոնադրության 4.2 կետում նշված գումարը Հիմնադրամի ստեղծման պահից տասն օրվա ընթացքում փոխանցելով Կենտրոնական բանկում բացված Հիմնադրամի հատուկ հաշվին:

4.2. Հիմնադրամի գույքի սկզբնական արժեքը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.3. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված մասնակցության վճարների գումարները:

4.4. Հիմնադրամի գույքի տնօրինումը և կառավարումը իրականացվում է Օրենքով, սույն Կանոնադրությամբ և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված կարգով:

4.5. Հիմնադրամի ծախսերն են՝

վարչակառավարչական ծախսերը,

կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը:

4.6. Հիմնադրամի վարչակառավարչական և կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը հաստատվում են հոգաբարձուների խորհրդի կողմից՝ Հիմնադրամի ընթացիկ գործունեությունն ապահովելու, նրա կողմից Օրենքով սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով:

4.7. Վարչակառավարչական և կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը ներառում են Հիմնադրամի կառավարչի, ֆինանսական համակարգի հաշտարարի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգիչի), աշխատողների աշխատավարձը, հոգաբարձուների խորհրդի անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերը, ինչպես նաև Հիմնադրամի ընթացիկ գործունեության իրականացումն ապահովելու համար այլ ծախսերը: Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերի հաշվառումը պետք է կատարվի Հիմնադրամի այլ ծախսերից առանձնացված, Օրենքով սահմանված կարգով:

4.8. Հիմնադրամի ֆինանսավորումն իրականացնում են սույն կանոնադրության 4.10. կետում նշված կազմակերպությունները (այսուհետ՝ Կազմակերպություններ)՝ Հիմնադրամի օգտին կատարվող մասնակցության վճարների միջոցով, որոնք մուտքագրվում են հատուկ այդ նպատակով Կենտրոնական բանկում վարվող հատուկ հաշվին:

4.9. Մասնակցության վճարները Կազմակերպությունները կատարում են յուրաքանչյուր եռամսյակ՝ հավասար չափաբաժիններով, մինչև ընթացիկ եռամսյակի առաջին ամսվա 20-ը:

4.10. Կազմակերպությունների կողմից կատարվող մասնակցության վճարների տարեկան չափերն են՝

- 1) բանկեր՝ նախորդ տարվա վերջի դրությամբ ակտիվների 0.01 տոկոսը,
- 2) վարկային կազմակերպություններ (բացառությամբ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների)՝ նախորդ տարվա վերջի դրությամբ ակտիվների 0.07 տոկոսը,
- 2.1) Կենտրոնական դեպոզիտարիա՝ 140 000 դրամ,
- 3) ապահովագրական ընկերություններ՝ նախորդ տարվա ընթացքում հավաքված ապահովագրական պարզևների 0.15 տոկոսը,
- 3.1) Բյուրո՝ նախորդ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից Երաշխավորման ֆոնդ կատարված պարբերական վճարների 0.15 տոկոսը,
- 4) ապահովագրական բրոկերներ՝ 90.000 դրամ,
- 5) ներդրումային ընկերություններ՝ 90.000 դրամ,
- 5.1) ներդրումային ֆոնդի կառավարիչներ՝ 90.000 դրամ,
- 6) գրավատներ՝ 45.000 դրամ,
- 7) արտարժույթի առքուվաճառք իրականացնող անձինք՝ 30.000 դրամ,
- 8) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձինք՝ 140.000 դրամ,

9) Վարկային բյուրո՝ 140.000 դրամ:

4.11. ՀՀ կենտրոնական բանկի կողմից նոր լիցենզիա ստացած Կազմակերպությունների և/կամ միաժամանակ սույն Կանոնադրության 4.10 կետում նշված գործունեության երկու և ավելի տեսակներով զբաղվող կազմակերպությունների կողմից մասնակցության վճարների իրականացման կարգը սահմանվում է Օրենքով:

4.12. Լիցենզիայի գործողության կասեցումը Կազմակերպությանը չի ազատում սույն կանոնադրությամբ նախատեսված մասնակցության վճարները կատարելու պարտականությունից:

ԳԼՈՒԽ 5. Հիմնադրամի շահառուների խմբերը

5.1. Հիմնադրամի շահառու են հանդիսանում այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք Օրենքի իմաստով հանդիսանում են Հաճախորդ:

ԳԼՈՒԽ 6. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, դրա կազմը և անդամների նշանակման կարգը

6.1. Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ նաև՝ Խորհուրդ):

6.2. Խորհուրդը կազմված է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահ և մյուս անդամներ:

6.3. Խորհրդի անդամներին նշանակում է

6.3.1. մեկին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

6.3.2. մեկին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը,

6.3.3. մեկին՝ բանկերի միությունը (միությունները), մեկին՝ վարկային կազմակերպությունների միությունը (միությունները), մեկին՝ ապահովագրական ընկերությունների միությունը (միությունները), մեկին՝ մյուս կազմակերպությունների միությունները,

6.3.4. մեկին՝ սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները:

6.4 Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները Խորհրդի անդամների կազմից իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ երեք տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև նրա լիազորությունների ժամկետի ավարտը: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ:

6.5. Խորհրդի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով՝ Օրենքով սահմանված կարգով:

6.6. Խորհրդի նոր անդամը պետք է նշանակվի Խորհրդի անդամի լիազորությունների դադարումից ոչ շուտ, քան երեք, և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ՝ սույն գլխով

սահմանված կարգով, բացառությամբ խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքերի: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում՝ Խորհրդի նոր անդամը նշանակվում է Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

6.7. Խորհրդի անդամները իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով:

6.8. Խորհրդի անդամի՝ իր կողմից Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են Խորհրդի կողմից սահմանված կարգով:

6.9. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

6.10. Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում Հիմնադրամը տեղեկացնում է այդ մասին լիազորությունները դադարած անդամին նշանակած մարմնին, որը, Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, նշանակում է նոր խորհրդի անդամին:

6.11. Խորհրդի անդամների նշանակման իրավունք ունեն այն Կազմակերպությունների միությունները և սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունները, որոնց պետական գրանցման օրվանից անցել է առնվազն հինգ տարի:

6.12. Եթե 6.6-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Կազմակերպության միություն(ներ)ը և/կամ սպառողների իրավունքների պաշտպանության միությունները չեն նշանակում Խորհրդի իրենց անդամին, ապա նրան նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը՝ մեկ ամսվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 7. Հոգաբարձուների խորհրդի նիստերը

7.1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են Խորհրդի առնվազն չորս անդամ: Խորհրդի նիստերում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խորհուրդը որոշումները կայացնում է ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Չայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

7.2. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով Խորհրդի որոշմամբ կարող են հրավիրվել փորձագետ(ներ): Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ֆինանսական համակարգի հաշտարարը (հաշտարարները):

7.3. Խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում:

7.4. Արձանագրությունում նշվում են՝

- 1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
- 2) նիստին ներկա անձինք,
- 3) նիստի օրակարգը,
- 4) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,
- 5) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.5. Խորհրդի նիստերը կարող են գումարվել առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդի նախագահի, Խորհրդի անդամի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի պահանջով Խորհրդի նախագահի կողմից: Խորհուրդը կարող է գումարել նաև արտահերթ նիստեր:

7.6 Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

ԳԼՈՒԽ 8. Հոգաբարձուների խորհրդի իրավասությունները

8.1. Խորհուրդն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) Խորհրդի առնվազն 5 անդամների ձայներով հաստատում է Հիմնադրամի կանոնադրությունը, դրանում փոփոխությունները և լրացումները, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) ընդունում է որոշումներ Ֆինանսական համակարգի հաշտարարի, կանոնադրությամբ սահմանված այլ մարմիններ ձևավորվելու դեպքում՝ դրանց ընտրության և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին՝ Օրենքով սահմանված կարգով,

3) հաստատում է Հիմնադրամի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերը, այդ թվում՝ ակտեր, որոնցով սահմանվում են Խորհրդի անդամների, Ֆինանսական համակարգի հաշտարարի և Գրասենյակի աշխատակիցների վարքագծի և էթիկայի կանոնները, որոնք ներառում են նաև բացարկի ու ինքնաբացարկի ներկայացման, քննարկման և որոշման կայացման դեպքերն ու կարգը, նրանց գործելակերպի արդյունավետությունն ապահովող շարժառիթները, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու կարգը, Խորհրդի կողմից որոշումների ընդունման դեպքում Խորհրդի անդամների շահագրգռվածության և շահերի բախման ընդհանուր սկզբունքները, Խորհրդի անդամների միջև աշխատանքի բաշխման և նրանց պատասխանատվության վերաբերյալ դրույթներ, ինչպես նաև Խորհրդի աշխատակարգը,

- 4) Սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ լսում է Ֆինանսական համակարգի հաշտարարի հաշվետվությունները,
- 5) վերահսկում է իր որոշումների կատարման ընթացքը,
- 6) վերահսկում է Հիմնադրամի ընթացիկ և ֆինանսատնտեսական գործունեությունը,
- 7) հաստատում է Հիմնադրամի բյուջեն, դրա փոփոխությունները, վերահսկում է բյուջեի կատարումը,
- 8) հաստատում է Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը,
- 9) ընտրում է Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), սահմանում է վերջինիս վճարման չափը,
- 10) վերահսկում է իր որոշումների կատարման ընթացքը,
- 11) վերահսկում է Հիմնադրամի ընթացիկ և ֆինանսատնտեսական գործունեությունը,
- 12) ընդունում է որոշումներ Խորհրդի նախագահի ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման,
- 13) հաստատում է Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերը և դրա փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները,
- 14) հաստատում է ֆինանսական համակարգի հաշտարարի և Հիմնադրամի աշխատակիցների վարձատրման և պարգևատրման կարգը, սոցիալական ապահովության ծախսերը և դրանց հատկացման կարգը, Հիմնադրամի կառավարչի տեղակալի հաստիքը, որին նշանակված անձը չի կարող իրականացնել ֆինանսական համակարգի հաշտարարի մասնագիտական գործունեություն,
- 15) նշանակում է Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի անդամներին կամ վերստուգիչին, սահմանում է նրանց վարձատրության չափը,
- 16) վերահսկում է Հիմնադրամի կողմից օրենքների, իրավական այլ ակտերի կատարումը,
- 17) գնահատում է իրականացված աուդիտորական արդյունքները, վերահսկում է բացահայտված թերությունների վերացմանը ուղղված միջոցառումների կատարումը,
- 18) առաջարկություն է ներկայացնում Խորհրդի անդամներին նշանակված մարմիններին տվյալ Խորհրդի անդամին պաշտոնից ազատելու վերաբերյալ,
- 19) որոշում է ընդունում Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով փորձագետներ հրավիրելու մասին,
- 20) որոշում է ընդունում Խորհրդին կից հանձնաժողովների ստեղծման վերաբերյալ,
- 21) իրականացնում է Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.2. Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

8.3. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին: Ընդ որում, սույն կետի իմաստով Հիմնադրամի փաստաթղթեր չեն համարվում ֆինանսական հաշտարարի մասնագիտական գործունեության ընթացքում՝ ֆինանսական կազմակերպությունների դեմ հաճախորդների ներկայացրած բողոք-պահանջների քննության ժամանակ ուսումնասիրված փաստաթղթերը:

8.4. Խորհուրդն ու Խորհրդի անդամներն իրավունք չունեն որևէ կերպ միջամտելու Ֆինանսական համակարգի հաշտարարի մասնագիտական գործունեությանը և (կամ) ազդելու պահանջների քննման ընթացքի և որոշումների կայացման վրա:

ԳԼՈՒԽ 9. Հոգաբարձուների խորհրդի նախագահը

9.1. Խորհրդի նախագահը՝

1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, ստորագրում է Խորհրդի կողմից ընդունված որոշումները,

2. գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

4. կոորդինացնում է Խորհրդին կից հանձնաժողովների գործունեությունը,

5. իրականացնում է Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

9.2. Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում Խորհրդի նիստի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.3. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

ԳԼՈՒԽ 10. Հիմնադրամի կառավարիչը և ֆինանսական համակարգի հաշտարարը

10.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի կառավարիչը: Հիմնադրամի կառավարիչը՝

1) ապահովում է Հիմնադրամի բնականոն գործունեությունը,

2) իր իրավասությունների շրջանակներում պատրաստում է Խորհրդի նիստերի օրակարգերը և որոշումների նախագծերը, այդ թվում՝ Կազմակերպությունների կողմից լրացուցիչ մասնակցության վճարներ կատարելու մասին որոշման նախագիծը,

3) տնօրինում է Հիմնադրամի միջոցները,

4) առանց լիազորագրի հանդես է գալիս Հիմնադրամի անունից, տալիս է լիազորագրեր,

5) Հիմնադրամի անունից կնքում է գործարքներ,

6) Հիմնադրամի անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,

7) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի ներքին իրավական ակտերի նախագծերը, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

8) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

9) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի բյուջեն,

10) իր իրավասության սահմաններում տալիս է կատարման համար պարտադիր հրամաններ և կարգադրություններ, վերահսկում է դրանց կատարումը,

11) առնվազն եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին Հիմնադրամի գործունեության և միջոցների վերաբերյալ,

12) իրականացնում է Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

10.2. Հիմնադրամի կառավարիչը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, և պետք է գերծ մնա իր անկախությունը և անաչառությունը կասկածի տակ դնող գործողություններից:

10.3. Հիմնադրամի կառավարիչը չի կարող լինել այն անձը, որը

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

3) դատավճռով զրկվել է իրավաբանական կամ ֆինանսական ոլորտներում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

10.4. Հիմնադրամի կառավարիչը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնադրամի մարմիններին և այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար:

10.5. Հիմնադրամի կառավարիչ է հանդիսանում ֆինանսական համակարգի հաշտարարը, իսկ երկու և ավելի ֆինանսական համակարգի հաշտարարների առկայության դեպքում՝ ֆինանսական համակարգի գլխավոր հաշտարարը:

10.6. Ֆինանսական համակարգի հաշտարարը նշանակվում է Խորհրդի կողմից՝ չորս տարի ժամկետով, և կարող է նույն պաշտոնում վերանշանակվել:

Երկու և ավելի ֆինանսական համակարգի հաշտարարների առկայության դեպքում ֆինանսական համակարգի գլխավոր հաշտարարը նշանակվում է Խորհրդի որոշմամբ՝ ֆինանսական համակարգի հաշտարարների թվից: Ինչպես ֆինանսական համակարգի հաշտարարը, այնպես էլ ֆինանսական համակարգի գլխավոր հաշտարարը, իրականացնելով Հիմնադրամի կառավարչի լիազորություններ, շարունակում են իրականացնել նաև ֆինանսական համակարգի հաշտարարի մասնագիտական գործունեությունը:

10.7. Ֆինանսական համակարգի հաշտարարի նշանակման վերաբերյալ որոշումն ընդունվում է Խորհրդի առնվազն 5 անդամների ձայներով:

10.8. Ֆինանսական համակարգի հաշտարարների թիվը որոշում է Խորհուրդը:

10.9. Ֆինանսական համակարգի գլխավոր հաշտարարի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է ֆինանսական համակարգի հաշտարարներից մեկը՝ ֆինանսական համակարգի գլխավոր հաշտարարի որոշմամբ:

10.10. Ֆինանսական համակարգի հաշտարարի վարձատրությունը չպետք է պակաս լինի բանկային համակարգում վարձատրության միջին չափի եռապատիկից: Ֆինանսական համակարգի հաշտարարի վարձատրությունը կազմված է ամրագրված գումարից և լրավճարներից՝ յուրաքանչյուր քննված պահանջի համար: Լրավճարների չափերը և հաշվարկման կարգը սահմանում է Խորհուրդը:

10.11. Ֆինանսական համակարգի հաշտարարի պաշտոնից ազատման և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերը և կարգը սահմանվում են Օրենքով:

ԳԼՈՒԽ 11. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը). Դրա լիազորությունները

11.1. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) նշանակվում է Խորհրդի կողմից՝ 3 տարի ժամկետով:

11.2. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Խորհրդի որոշմամբ:

11.3. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) իր լիազորությունների շրջանակներում՝

ա) հսկողություն է իրականացնում Հիմնադրամի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ,

զ) հսկողություն է իրականացնում Հիմնադրամի կառավարչի և ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Հիմնադրամի ներքին ակտերի, տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

դ) Խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին Հիմնադրամի գործունեության համապատասխանության,

ե) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,

զ) ստուգում է Հիմնադրամին վճարվող մասնակցության վճարների հաշվարկման ճշտությունը:

11.4. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) ստուգում է Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ կամ Խորհրդի որոշմամբ:

11.5. Վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

11.6. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) կարող է պահանջել արտահերթ Խորհրդի նիստի գումարում՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

11.7. Վերստուգիչ հանձնաժողովի (կամ վերստուգիչի) իրավասություններին վերաբերվող հարցերը չեն կարող փոխանցվել Հիմնադրամի այլ մարմինների լուծմանը:

11.8. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները (կամ վերստուգիչը) չեն կարող Հիմնադրամում զբաղեցնել այլ պաշտոն կամ լինել Հիմնադրամի կառավարման մարմինների հետ փոխկապակցված անձինք:

11.9. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) հաշվետու է Խորհրդին: Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) Խորհրդին հաշվետվություններ է ներկայացնում Խորհրդի որոշմամբ սահմանված կարգով:

11.10. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 12 . Հիմնադրամի լուծարումը

12.1. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

12.2. Հիմնադրամը կարող է լուծարվել ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում:

12.3. Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Օրենքով և օրենքների համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

12.4. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

12.5. Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

12.6. Լուծարման հանձնաժողովն <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում Հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

12.7. Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:

12.8. Լուծարման ընթացքում Հիմնադրամն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

12.9. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

12.10. Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Խորհուրդը:

12.11. Միջանկյալ լուծարման հաշվեկշռի հաստատվելուց հետո, եթե լուծարվող Հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, սույն օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է Հիմնադրամի գույքի վաճառքը:

12.12. Լուծարման հանձնաժողովը լուծարվող Հիմնադրամի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական

օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշիռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

12.13. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

12.14. Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում Խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

12.15. Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ Հիմնադրամի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

12.16. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

12.17. Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի կողմից սույն գլխի 12.3., 12.10. և 12.14. կետերով սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշիռի և լուծարման հաշվեկշիռի ներկայացման պահից) չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը Հիմնադրամի լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ: